ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/54 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	-	-	Մագնիսական խառնիչ տաքացմամբ: Ընդհանուր պահանջներ. Իրանը պետք է լինի մետաղական և քիմիական ազդեցությունից դիմացկուն փոշեներկով: Սարքը պետք է ունենա հանվող հենարան սենսորների (ջերմաստիճան, pH և այլն) տեղադրման համար: Հավաքածուն պետք է ներառի տեֆլոնապատ ցիլինդրիկ մագնիսական էլեմենտ՝ ընդհանուր կիրառման համար: Սարքը պարտադիր պետք է ունենա գերտաքացումից պաշտպանություն, որը ավտոմատ անջատում է տաքացումը սահմանված ջերմաստիճանից բարձր լինելու դեպքում: Լրացուցիչ պետք է լինի ֆունկցիա՝ տաքացումը անջատելու, եթե մակերեսի ջերմաստիճանը գերազանցում է սահմանվածից ավելի քան 30°C: Մագնիսական խառնիչը պետք է օգտագործվի հետևյալ գործողությունների համար՝ օրգանական սինթեզ, էքստրակցիա, նավթամթերքների անալիզ, pH չափումներ, դիալիզ, հողի սուսպենդավորում, բուֆերային լուծույթների պատրաստում և այլն: Սարքը պետք է աշխատի առնվազն +4°C-ից մինչև +40°C ջերմաստիճանային միջակայքում՝ խոնավությամբ մինչև 80%:

			Տեխնիկական պահանջներ. Պտտման արագությունը՝ առնվազն 250-1250 պտ/ր տիրույթում, ջրի առավելագույն ծախսման ծավալը՝ առնվազն 15լ, ջերմաստիճանի կարգավորում՝ առնվազն +30°C-ից +330°C տիրույթում, ջերմաստիճանի հավասարաչափություն՝ ոչ ավելի, քան ±3°C, տաքացման ժամանակ մինչև +330°C՝ ոչ ավել, քան 15 րոպե, անընդմեջ աշխատանքի տևողություն՝ առնվազն 168 ժամ, աշխատանքային մակերեսի տրամագիծը՝ առնվազն 160մմ, մակերեսի նյութը՝ ալյումինե համաձուլվածք կամ համարժեք, մագնիսական էլեմենտի երկարությունը՝ 10-ից մինչև 50 մմ, հեղուկի առավելագույն մածուցիկությունը՝ մինչև 1170 mPa·s: Վթարի ցուցիչի առկայություն՝ ձայնային ազդանշանով և տաքացման անջատմամբ: Քաշը՝ ոչ ավել, քան 3կգ: Ցանցի լարում՝ 230Վ, 50/60Հց կամ 120Վ, 50/60Հց: Սարքի հետ պետք է տրամադրվեն բոլոր անհրաժեշտ պարագաները լիարժեք աշխատանքի համար: Անձնակազմի ուսուցում: Երաշխիքային ժամկետ՝ առնվազն 2 տարի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЗЦЧ-ЕЦЖЦПЗДР-26/54 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
5			